



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

16 նոյեմբերի 2021 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏԸ ՉԿԱՅԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

2021 թվականի նոյեմբերի 16-ին ժամը 15:00-ին հրավիրված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու արտահերթ դռնբաց նիստին մասնակցելու համար մինչև ժամը 15:30-ը ավագանու տասը անդամից ներկայացել էին միայն երեքը՝ Տելեմակ Աղվանյանը, Նվեր Վարդանյանը և Աղաբեկ Մոսինյանը:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Համայնքի ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավազորությունը, կամ նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, նիստին ներկա ավագանու անդամները կազմեցին սույն արձանագրությունը ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 16-ի տասնվեցերորդ արտահերթ նիստը չկայանալու մասին:

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի
ավագանու անդամներ՝**

Տ. ԱՂՎԱՆՅԱՆ

Ա. ՄՈՍԻՆՅԱՆ

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ



Արձանագրեց՝

ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ Ն. Վարդանյանը

2021թ., նոյեմբերի 16, ժ. 15:34
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

[Faint, mostly illegible text from the official document, including a header and several paragraphs.]